

«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Բնագիտություն

6-րդ դասարան

«Բնագիտություն» առարկայի ուսուցման նպատակը.

Բնագիտությունը 6 դասարաններում բնության մեջ մարմինների և երևույթների վերաբերյալ պարզագույն գիտելիքների ստացումն է, նոր կարողությունների և հմտությունների զարգացումը: Այն ներառում է գիտելիքներ էկոլոգիայից, ֆիզիկական աշխարհագրությունից, կենսաբանությունից, ֆիզիկայից, աստղագիտությունից, քիմիայից: Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է բնապահպանական աշխատանքների, հայրենագիտական ճամփորդությունների, բույսերի և կենդանիների խնամքի ձևով և լաբորատորիայում, փորձի հիման վրա, աստղացուցարանում, ասղադիտարանում:

Այս դասընթացն առավել կարևոր է որպես նախապատրաստություն բնագիտության մեթոդի հետ ծանոթացման և միջին ու ավագ դպրոցներում բնագիտական առարկաների ինքնուրույն ուսումնասիրության համար: Հետևաբար դասընթացի հիմնական խնդիրը սովորողներին բնության ուսումնասիրության գիտական մեթոդներին ծանոթացնելն է: Սովորողը ծանոթանում է բնապահպանական խնդիրների, շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտության, մարդ-բնություն փոխհարաբերության, էներգիայի և ռեսուրսների խնայողաբար օգտագործման հետ, պարզ փորձերի միջոցով իր ուշադրությունը կենտրոնացնում այս կամ այն երևույթի վրա, ձևավորում հարցեր տալու սովորություն, բնության և բնական երևույթների նկատմամբ ուշադրություն, փորձարարական և բնապահպանական աշխատանքի նախնական հմտություններ: Բնագիտական աշխատանքի արդյունքում զարգանում են նրա ուսումնական ընդհանուր կարողությունները, հմտությունները՝ տրամաբանություն, հետևողականություն, ուսումնական աշխատանքը մինչև վերջ հասցնելու համառություն, ինքնուրույն վերլուծելու, եզրակացություններ անելու, համագործակցային ունակություններ, ինքնուրույն «հայտնագործություններ» կատարելու ձգտում:

6-րդ դասարանն ավարտող սովորողը պետք է կարողանա.

- դիտել և նկարագրել երևույթը,
- կարողանալ չափել հիմնական ֆիզիկական մեծությունները (երկարություն, զանգված, ժամանակ, և այլն), հասկանալ դրանց անհրաժեշտությունը, իմանալ դրանց չափման միավորները և նրանց միջև եղած կապերը
- երևույթի վերաբերյալ կատարել հարցադրումներ,
- բնության երևույթների դիտումների արդյունքների բացատրության համար ինքնուրույն հիպոթեզներ առաջադրել,
- փորձի արդյունքներն իր գիտելիքների և կարողությունների սահմանում ներկայացնել

- նախնական պատկերացումներ ֆիզիկական մեծությունների վերաբերյալ,
- փորձեր կատարելու պարզագույն հմտություններ,
- փորձերից սեփական եզրակացություններ անելու հմտություններ,
- նախնական գիտելիքներ տիեզերքի, Երկիր մոլորակի, դրա կառուցվածքի կառուցվածքի, մայրցամաքների և օվկիանոսների մասին:

Ուսումնական միջավայր.

Քանի որ բնագիտությունը հիմնականում ուսումնասիրվում է փորձերի միջոցով, անհրաժեշտ է.

- բակ-պարտեզ, ջերմոց, թռչունների, կենդանիների բներ,
- կահավորված լաբորատորիա,
- աստղացուցարան, աստղադիտակ,
- համացանցին միացված էլեկտրոնային գրատախտակ,
- թվային ֆոտոխցիկ,
- տեսախցիկ,
- էլեկտրոնային ռեսուրս,
- բնագիտական և գիտահանրամատչելի գրականություն

Սովորողի ուսումնական գործունեության

ձևերը. դրանց հիմնական բովանդակությունը, կազմակերպումը

Ծրագիրը հիմնվում է դիտարկումների, փորձերի, հետազոտությունների, ինքնուրույն ուսումնասիրությունների, եզրահանգումների, նոր խնդիրների առաջադրման վրա: Սովորողը ուսուցչի օգնությամբ կամ առանց նրա, յուրացնում է տեսական նյութերը՝ օգտագործելով SՏՏ միջոցներ, կատարում է փորձեր, գործնական աշխատանքներ, որոնք ձևակերպում է էլեկտրոնային եղանակով, մասնակցում է ուսումնական ճամփորդություններին: Դասերը ավելի բովանդակալից դարձնելու նպատակով ուսումնասիրությունը ուղեկցվում է համապատասխան թեմաների կինոդիտումներով, աստղադիտակով դիտումներով, աստղացուցարան, թանգարաններ և ցուցահանդեսներ այցելելություններով, հայրենագիտական ճամփորդություններով:

Հիմնական գործունեությունը սովորողը իրականացնում է դասի ժամանակ:

Տանը սովորողը զբաղվում է ինքնակրթությամբ, իր ցանկությամբ կատարում է իր՝ որպես լրացուցիչ կրթություն ընտրած տնային աշխատանքը, կարդում գիտահանրամատչելի գրականություն:

Անհատապես կամ փոքր խմբով սովորողը կատարում է հետազոտական աշխատանք, մասնակցում է տարբեր մրցույթների:

Հատուկ կարիքներով սովորողները, ըստ իրենց կարիքի, ներառվում են խմբային աշխատանքների մեջ:

Գրականություն

- Ֆ. Լևի «Ինչից է ամեն ինչը»
- Փ. Рабиза «Опыты без приборов»
- М. Гершензон «Головоломки профессора Головоломкина»
- Gardner «Amusing experiments»
- Էլեկտրոնային ռեսուրսներ